Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության
գիտության պետական կոմիտեի
և
Բելառուսի Հանրապետության գիտության և
տեխնոլոգիաների պետական կոմիտեի միջև

համագործակցության շրջանակներում գիտական ծրագրերի մրցույթի անցկացման

ԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն և Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեն, այսուհետև՝ Կողմեր, Համագործակցության մասին, «19» մարտի 2010 թ. համաձայնագրի 2-րդ հոդվածի դրույթի համաձայն, սույն Կարգով որոշում են Հայաստանի և Բելառուսի գիտական խմբերի կողմից համատեղ իրականացվող հիմնարար հետազոտությունների նախագծերի մրցույթների (այսուհետև՝ Մրցույթներ) պայմանները և անցկացման ժամկետները, ինչպես նաև մրցույթի արդյունքում երաշխավորված նախագծերի ֆինանսավորման կարգը:

2 Մրցույթների պայմանները

2.1. Մրցույթների նպատակն է ֆինանսական աջակցություն տրամադրել Հայաստանի և Բելառուսի գիտնականների կողմից համատեղ իրականացվող նախաձեռնողական գիտահետազոտական նախագծերին:

Կողմերը կազմակերպում են մրցույթներ՝ երկու տարի պարբերությամբ, սկսած 2014 թվականից:

Մրցույթներն անցկացվում են հետևյալ գիտական ուղղություններով.

- մաթեմատիկա, մեխանիկա և ինֆորմատիկա,
- ֆիզիկա և աստղագիտություն,
- քիմիա,
- կենսաբանություն, բժշկագիտություն, դեղագիտություն,
- գիտություններ մարդու և հասարակության մասին,
- գիտություններ Երկրի մասին , երկրի հեռավար զոնդավորում,

- տեղեկատվական տեխնոլոգիաներ և հաշվողական համակարգեր,
- ճարտարագիտական գիտությունների հիմնարար հիմունքներ,
- գյուղատնտեսություն:

Մրցույթներին չեն կարող մասնակցել.

- հայտարարված ժամկետից ուշ ներկայացված հայտերը,
- Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության պետական բյուջեներից արդեն իսկ ֆինանսավորվող նախագծերը,
- այն նախագծերը, որոնք արդեն ստացել են ՀՀ և ԲՀ այլ հիմնադրամների և կազմակերպությունների աջակցությունը:

Կողմերից յուրաքանչյուրն իր Կողմում ապահովում է մրցույթների անցկացումը, հայտերի անկախ փորձաքննությունը և հաստատված նախագծերի ֆինանսավորումը:

Կողմերը քննարկում են գիտական ստեղծագործական խմբերից ներկայացված հայտերը:

2.2. Հայկական և բելառուսական կողմերի համաղեկավարները նախապես համաձայնեցնում են հետազոտության թեման, նախագծով նախատեսված պարտականությունների բաշխումը և ընդհանուր աշխատանքային պլան-ժամանակացույցը: Միևնույն նախագծի հայտերը պետք է ունենան նախագծի նույն անվանումը և համաղեկավարներ՝ հայկական և բելառուսական կողմերից:

Համաձայնեցված հայտերը ներկայացվում են միաժամանակ. նախագծի հայկական կողմի համաղեկավարները՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, իսկ բելառուսական կողմի համաղեկավարները՝ Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտե: Հայտերի ձևերը Կողմերը հաստատում են ինքնուրույն:

Չհամաձայնեցված հայտերը կամ միայն մեկ կողմից ներկայացված հայտերը չեն քննարկվում:

Մրցույթին մասնակցության համար թեմայի ղեկավարին և/կամ կատարողին ներկայացվող պահանջները Կողմերից յուրաքանչյուրը հաստատում է ինքնուրույն:

2.3. Հայտերի անկախ փորձաքննությունը Կողմերից յուրաքանչյուրն անցկացնում է համաձայն իր կանոնակարգի:

Վերջնական որոշումն ընդունվում է փորձաքննության արդյունքների համատեղ քննարկման հիման վրա: Փորձաքննության արդյունքների հիման վրա ֆինանսավորման երաշխավորված գիտական նախագծերի տարեկան քանակը որոշվում է՝ ելնելով Կողմերի բյուջեների հնարավորություններից:

2.4. Յուրաքանչյուր նախագծի կատարման տևողությունը երկու (2) տարի է:

Հաշվետվության ձևերը և կանոնները յուրաքանչյուր Կողմ հաստատում է ինքնուրույն:

Հայաստանի և Բելառուսի գիտնականների խմբերի համաղեկավարները ներկայացնում են միջանկյալ (տարեկան) և ամփոփիչ հաշվետվություններ, համապատասխանաբար, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե և Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտե:

3. Մրցույթների անցկացման ժամկետները

3.1. Մրցույթների իրականացման ժամանակացույցը հաստատվում է Կողմերի համատեղ քննարկման արդյունքում:

3.2. Հերթական մրցույթ հայտարարելուց առաջ Կողմերը համաձայնեցնում են հայտարարության տեքստը և ճշգրտում են մրցույթի անցկացման կոնկրետ ժամկետները:

4.Ընդունված նախագծերի ֆինանսավորում

4.1. Երաշխավորված նախագծերի ֆինանսավորումն իրականացվում է հետևյալ սկզբունքով. յուրաքանչյուր Կողմ ֆինանսավորում է միայն իր Կողմի մասնակիցներին: Նախագծերի ֆինանսական աջակցությունը կատարվում է անհատույց և անվերադարձ հիմունքներով՝ անկախ նախագծի մասնակից-գիտնականների տարիքից, գիտական աստիճանից, գիտական կոչումից և զբաղեցրած պաշտոնից:

Նախագծի ծախսերի նախահաշվի մեջ կարող են ներառվել նաև ՀՀ և ԲՀ գիտնականների հյուրընկալման և միջազգային գործուղումների հետ կապված ծախսեր՝ ներառյալ միջազգային և տեղական ուղևորությունները, կեցության (գիշերավարձ և օրապահիկ) հետ կապված ծախսերը՝ սահմանված կարգին համապատասխան:

Կողմերը պարտավորվում են նախագծերի համար նախատեսված ընթացիկ տարվա ֆինանսավորման միջոցները յուրաքանչյուր տարի հատկացնել ամբողջ ծավալով:

4.2.Հետազոտությունների արդյունքները տեղական և միջազգային պարբերականներում հրատարակելիս գիտնականները պարտավոր են նշել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեից և Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեից ստացված ֆինանսական աջակցության մասին: Այս դրույթը հանդիսանում է ֆինանսական աջակցության տրամադրման անհրաժեշտ պայման :

4.3. Երաշխավորված նախագծերի ֆինանսավորումը կիրականացվի յուրաքանչյուր տարի,

սկսած 2015 թ-ից :

Առանձին նախագծի տարեկան ֆինանսավորման ծավալը յուրաքանչյուր Կողմ հաստատում է ինքնուրույն, հայտերի կամ ընթացիկ հաշվետվությունների փորձաքննության արդյունքներին համապատասխան՝ ելնելով յուրաքանչյուր Կողմի ընդունած գիտական դրամաշնորհների ֆինանսավորման միջին չափից:

5. Ամփոփիչ դրույթներ

Սույն Կարգի իրագործման հետ կապված գործողությունների համակարգումը իրականացնում են.

- ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կողմից՝ Միջազգային համագործակցության բաժինը,

Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի կողմից Արտաքին կապերի եւ տեղեկատվության բաժինը,

Կատարված է ք. Երեւանում , «14» հոկտեմբերի 2013 թ. , երկու բնօրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն եւ ռուսերեն օրինակներից:

Կողմերի ստորագրությունները՝

Հայաստանի Հանրապետության կրթության գիտության նախարարության գիտության գիտության պետական կոմիտեի կողմից՝	Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի կողմից
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ս.Գ.	ԴԵՄԻԴՈՎ Լ.Վ.
Նախագահ	Առաջին տեղակալ